

Ըսեց՝ արի դըրբ մը լէ զարկ՝

Ըսեց.— Դաւիթ, քրզի կ'էղնիմ փոշեհան, կուիւ չ'էնինք:

Ըսեց.— Զէ, չ'էղնելոց բան է, դըրբ մի զարկեր իս, մէկ լէ զարկ:

Էկաւ մէկ դըրբ լէ զարկեց, ըսեց.— Ի՞մալ իս, Դաւիթ:

Ըսեց.— Սըփ Նշանի զօրուտենով ինչ օր մէկ լու խածէ. արի, ըսեց, արի էն մէկ դըրբ լէ զարկ ու պրծի:

Էն մէկէլ դըրբ լէ էկաւ, զարկեց:

Դաւիթ թուաւ, էլաւ, կայնաւ:

Ըսեց.— Դոր բունն է, արի չոքի:

Բերեց ու չոքըցուց:

Դաւիթ քաշեց ուր թուրն, օր պղի զարկէր, Մարամելիքի մէրն էկաւ թէ՛— Դաւիթ, էդ մէկ դըրբ բախշէ ընձի:

— Ըհա՛, ըսեց, իդա մէկ դըրբ բախշեցի քրզի:

Ու թուր քաշեց, էլի պղի զարկէր, քուրն էկաւ թէ՛— Դաւիթ, իդա մէկ դըրբ լէ բախշէ՛ ընձի:

— Ըհա՛, ըսեց, քուրիկ, իդա մէկ դըրբ լէ բախշեցի քրզի:

Ըսեց.— Բերէք Մարամելիք պառկըցուն:ք, ինչ խըդր ձըզի թաղիս, կարպետ, փալաս կայ՝ լցէք վրէն ու ես իմ մէկ դըրբ պղի զարկիմ:

Բերին, լցին վրէն:

Ու Սըփ Նշան խանչեց ու էկաւ զարկեց. զարկելուն՝ կարեց, մէկ գազ լէ իջաւ գետին¹⁾:

¹⁾ Բ. վարիանտի մէջ Մարամելիքի կուրն ու մահը պայպէս է պատմուած. Մարամելիք անձամբ գալիս է Ղոզբաղնու վրէժն առնելու և հարկը տանելու, բայց ոչ թէ Սասունից, ինչ պ. Աբեղեանի վարիանտում, այլ Խլաթից, ուր գտնուում է Դաւիթ և իւր բեռի Ձինով-Յովան: Մարամելիքն ասում է.

«Քառսուն կնիկ կուզիմ մէկ բաժի, մէկ սըֆաթի,
Քառսուն ախշիկ կ'ուզիմ մէկ բաժի, մէկ սըֆաթի,